

պուած է և այն, թէ 60-65 հազար հայ կաթոլիկները սկզբէ
յարեն հայ կենսակրթութեան, թէ լատինականութեան
ազգեցութեան տակ ընկնելով և մոռանալով մայրենի
լեզուն (իրանց դպրոցն ու ծուխը չունենալու պատճառով)
կը մնան հայութիւնից անջատուած։

Բագւումն էլ դրամ՝ հանդանակելու համար մայիսի
9-ին Թիֆլիսից դնացել է Ռուսաստանի հայ կաթոլիկ-
ների հոգեոր կառավարութեան անդամ, Թիֆլիսի հայ-
կաթոլիկների ծխառէր Մխիթարեան միաբանութեան
պատկանող Հ. Դիոնիսիոս Կալատաղեանը։



Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ՊՐԱԽՈՍԼԱԲ ԵԿԵՂԵՑԻ

Առև Սրբ. Սիմոնի նոր օքեր—պրօկուրօ

«Նոր Վրեմյա» (Մայիս 5) հաղորդում է, որ Սրբ. Սի-
մոնի նոր օքեր-պրօկուրօր վ. կ. Սարլերը յայտնել է, թէ
ինքը շի կամենում քնակուել Լիտէյնի փողոցի վերայ
գտնուող այն տանը, ուր քնակում էր իւր նախորդը. այդ
տան պահպանութիւնը տարեկան 25 հազար ռուբլի է
նատում։ Բայ Սարլերի՝ ուր տունը սկզբ է ծառայի
պրաւօղաւ եկեղեցու օգտին։ Այդ տեղը սկզբ տրուի հո-
գեսոր զբոյցների, երդիշների ժողովների, կրօնական-բա-
րոյական ընթերցումների հին։ Համար։ Այդուղ կարող է
զետեղուել քարողական գրադարանը, նոյնպէս կարելի է
յատկացնել եկող քարողիշների ընակութեան համար։

— «Նոր Վրեմյա»-ում Մ. Մենշիկովը բնորոշելով Սրբ.
Սիմոնի օքեր-պրօկուրօր Ա. Մ. Լուկիանովի ու նրա տեղ
նշանակուած վ. կ. Սարլերի գործունէութիւնը, և տխուր
գոյներով նկարագրելով պլատուալ եկեղեցու դրութիւնը,
ասում է.

ռ. կ. Սարլերի առաջ երկու ճանապարհ կայ. Հին
շինովնիկական, երբ իւրաքանչիւր օր ոլատրաստում
է որոշ քանակութիւն գրագրութիւններ և մնացածը
թողնում է Աստուծոյ կամքին. Այս ճանապարհը
եսական է, հակառետական և իսկապէս՝ հակաեկե-
ղեցական. Միւս ճանապարհը, որ բոլորովին նոր
է, դրա համար հարկաւոր են ստեղծադորձող լիա-
զօրութիւններ և փոտախտի դէմ մաքառելու վիրա-
հատի քաջասրտութիւն. Եկեղեցու մշտնջենաւոր կար-
գերի մէջ նոր բան շարադրելու կարիք չկայ, այլ
պէտք է դուրս քշել տաճարից հատավաճառներին,
մաքրել Աստուծոյ տունը, նայել թէ քահանաների
ձեռները մաքսւր են. իմ կարծիքով այս է եկեղեցու
մինիստրի պարտքը. Հեթանոսութիւնը ուժեղ էր, երբ
քրմերը հաւատացեալ էին: Ընկաւ հեթանոսութիւնը,
երբ նրանց փոխարինեցին ծաղրող հաւահմաններ, խա-
բերաններ: Մի գուցէ այդ բանը պատահի և քրիստո-
նէութեան հետո:

Պրաւուլաւ կուսակցօն նոգեւորականների գոյքի մասին

Շեր. ԵԵՏ. № 21. առնելով „Յաման.՝ ՝լրագրից դրում
է, որ Մոսկվայի միտրոպոլիտ Վլադիմիր արքեպիսկոպոսի
բնակարանում տեղի է ունեցել Սրբ. Սինոդի նիստը, որ
յանձնաբարել է Սրբ. Սինոդի օրեր ալրօկուրօր Սարլերին
միջնորդել թագաւոր կայսեր առաջ փոխելու օրէնքը այն-
պէս, որ եկեղեցու վարիչ հոգևորականների-եպիսկոպոս-
ների ու վանահայրերի և վանականների ամեն տեսակ գոյ-
քերը ժառանգութեան կարգով այլևս չանցնեն նրանց աղ-
գականներին, այլ մնան ի սեպհականութիւն այն թեմերի
ու վանքերի, ուր նրանք վարել են իրանց եկեղեցական
պաշտօնները:

— Ի՞նչ որ նոր է մտածւում պրաւուլաւ եկեղեցական
վարչութեան մէջ՝ նուիրագործուած է մեր եկեղեցական
կանոններով, և հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի միջ-

նորդութեամբ օրինականութիւն ստացաւ Բարձրագոյն բարեհաճութեամբ 1871 թ. 1 Մարտի, Այդ օրէնքով ծայրագոյն պատրիարքը կաթողիկոսի, թեմ. առաջնորդների և փոխառողջների բոլոր գոյքերը մնում են Ա. Էջմիածնի վանքին, եթէ նրանք բարեգործական նպատակով կտակ չեն թողել (XI հատ. մասն 1. յօդ. 1218. տոլագ. 1896), իսկ վանահայրերի, մայրապետների և առհասարակ վանականների գոյքը մնում է այն վանքերին, որոնց միաբան են, եթէ բարեգործական հաստատութիւնների օգտին կտակ չեն թողել (նոյն. յօդ. 1219)։

Ներքին Գործերի Նախարարեան բացաւրութիւնները (Խղճի ազատութեան մասին)

Այս վերնադրի տակ Ռուսա (№ 1681) լրագրում
կարդում ենք հետեւեալը.

Ոռւսաստանի քողոքացիներին օրէնքով թոյլապուած կրօնները դաւանելու և կրօնական պաշտամունքները կատարելու աղատութիւն շնորհող 1905 թ. ապրիլի 27-ին և 1906 թ. հոկտեմբերի 17-ին հրովարտակները դորժադրելիս, առաջ եկաղ տարակուսութիւնների առելթով, Ներքին Գործերի Նախարարութիւնը տուել է նահանգապետներին, քաղաքապետներին և շրջանների կառավարելչներին ի դիտութիւն հետեւեալ բացաւրութիւնները։

Լ. 1905 թ. ապրիլի 17-ին հրովարտակով իրաւունք է տրւում շափահառ պրաւուլաւներին, իրանց հայեցողութեան համեմատ անցնել ուրիշ դաւանութեան ու կրօնքի, բայց և հրովարտակը իւր մեջ ոչ մի այսպիսի ցուցանումք չի ըստանդակում, որով որ և է մեկը բռնի մերժուելը պրաւուլաւների թուից։

Ամեն մի այսպիսի բռնութիւն հակառակ է ոչ մեայն կրօնի աղատութեան համար Միապետի արտայայտած կամքի ոկզբունքին, այլ և պրաւուլաւ եկեղեցու հոգուն, որ չի մերժում հաւատի մեջ տատանող իւր զաւակին, այլ պատրաստ է մեջտ օդնութիւն և գթութիւն ցոյց տալ։

Նոյնպէս և Նախարարների Խորհրդի Բարձրագոյն հաստատուած 1905 թուի յունիսի 5-ին կարդապութիւնը (որով

որոշուել է վերև յիշուած հաւատափոխութիւնը իրագործելու կարգը) չի բռվանդակում այդպիսի բռնութիւն. և պրաւուսակութիւնից հեռացումն պայմանաւորում է այսպէս. հաւատափոխութիւն կամեցող անձը այս մասին պէտք է յօժացակամ յայտաբարութիւն տայ քաղաքական իշխանութեան:

Այսպիսի յայտաբարութիւն չեղած դեպքում այս կամ այն անձի պրաւուսակուների թուից մերժելու դործը, անկառիած, կարող է լինել միայն նոյն պրաւուսակ եկեղեցու տնօքէնութեամբ:

Այսպէս, ամեն կարգադրութիւն, որ լինում է պրաւուսակութիւնից բռնի հեռացնելու համար, ոչ միայն ապօրինի, այլ և պրաւուսակ եկեղեցու իրաւունքների միջամտութիւն է:

II. Դործադրող օրէնքը (բարձրագոյն հրովարտակ 17 ապրիլի 1905 թ.) բոլոր ոռւսահպատակներին տալով իրաւունք աղատօրէն ընտրելու և դաւանելու հաւատքը, որ օրէնքով թոյլատքէլի է, չի թոյլատրում որ և է սահմանափակութիւն պրաւուսակութիւնից անցնելու դեպի այլ քրիստոնէական դաւանութիւն և վարդապետութիւն:

Հենց այդ մտքով էլ կառավարիչ Սենատը 1909 թ. նոյեմբեր 17-ին դրել է իւր վճեռը, երբ Խերսոնի նահանգական վարչութիւնը մերժել էր ոռւսականարանական քըիստոնեայ քարտեստներին Կարլովեան համայնք կազմելու:

III. Աղանդաւորների որոշ դործողութիւնները (անարգամնը դեպի պրաւուսակ եկեղեցին, քարոզել ու մոլորեցնելը պրաւուսակուներին), որոնք նախատեսուած են քրէական օրէնքի 73 և 90 յօդուածներով, թէ և անպայման անմիջական յանցաւոքներին քրէական պատասխանատուութեան են ենթարկում, բայց նոյն աղանդին պատկանող անհատների դործողութիւնները ընդհանրապէս աստուածակաշտութեան ժողովներ կազմելու, ի հարկէ չի արգելում:

IV. Օրէնքով արգելուած դործողութիւններն են, անկառիած, պրաւուսակուներին ուղղակի կամ կոնկրետ ձեռով հրաւելը միանալու աղանդին և մասնակցելու նրա աղօթքի համախմբումներին:

Սակայն պրաւուսակուների ներկայ լինելը աղանդաւորների ժամանացութիւններին կամաստուածակաշտութիւններին ինքն ըստ ինքեան չի կարող օրէնքի հակառակ բան համարուել, որովհետեւ, պրաւուսակուներին պրաւուսակութիւնից հեռանալու աղատութեան արուելովը անկառիած, իրաւունք է յատկացւում ճանաչել և իւր համար դաւանութիւն ընտրել:

Աղանդաւորների իրանց համայնքից չեղող հաւատակայց-

ներին ուրիշ տեղերից հրաւիրելը մասնակցելու աղօթքի համար համախմբումներին հակաօրինական չէ, եթէ միայն այն համախմբումն յատկապէս առտուածալաշութեան աղօթքի համար է, և աղանգի շահերի, կրօնական կամ տնտեսական հարցերի ընտառութիւն չի կրում:

Այս վերջին դեպքում կրօնակիցների հրաւերը 1906 թ. մարտի 4-ի օրէնքի ճիշտ ցուցման համեմատ կարող է տեղի ունենալ բացառապէս ներքին Գործերի Նախարարի թոյլաւութեամբ:

V. Քրէական գործող օրէնսդրութիւնը նախատեսել է ինչպէս այլաղաւանների, նոյնպէս և աղանդաւորների ուսմունքի հոգեսոր անձանց կողմանակի ներգործութիւնը մանուկների կրօնական զգացման վերայ, սպառնալով քրէական օրէնքների 13 յօդ. Յ կետի զօրութեամբ, որ իրանց աղանդի հաւատապատումը չուսուցանեն անչափահաս պրաւոսլաւներին:

Ցիշեալ օրէնքի զօրութեանն է Ենթարկւում, անկառկած պրաւոսլաւ մանուկներին աղանդաւորների աղօթքներ, հոգեսոր երգեր ուսուցանելը և հրապուրելը դեպի աղանդաւորների ընդհանուր ժամասացութիւնը:

Էստ այսմ ընդունելով աղանդաւորների այդ տեսակ դորձողութիւնը որպէս հակաօրինական, անթոյլատընի, չարգելելով աղանդաւորների աղօթքի համար ժողովներ կազմելը, պէտք է միջոցներ ձեռք առնել, որ նրանք չհրապուրեն պրաւոսլաւ մանուկներին դեպի իրանց աղօթատեղիները:

VI. Նախարարութեան ունեցած տեղեկութիւններով, ոստիկանական աստիճանաւորները պրաւոսլաւութիւնից հեռացողներից պահանջում են ծննդեան վկայականներ, այլազաւան հոգեսորականութեան հաւասարագրեր, որ ընդունում են նրանց իրանց հաւատին և երկու վկաներ, որ հաստատէին, թէ յօժարակամ է եղել պրաւոսլաւութիւնից հեռացումն, և մինչեւ յիշարակաւած պահանջների կատարումն՝ յայտարարութիւններին ընթացք չեն տալիս. երբեմն մի քանի ամեններով անհրաժեշտ է դառնում ցոյց տալ, որ 1905 թուի օդոսուսի 18-ին շրջաբերական կարգադրութեան համեմատ վարչութեան իշխանութիւնները (սրբաւոսլաւութիւնից) հեռացողների վերաբերութեամբ միայն պարտական են ստուգել նրա հաստիք և այնուհետեւ մի ամսուայ ընթացքում յայտարարութիւնը պէտք է ուղարկեն պատշաճ հոգեսոր անձին:

VII. Պրաւոսլաւութիւնից դաւանափոխ լինել ցանկացողին համոզելը վերաբերում է պրաւոսլաւ հոգեսորականութեան աղդեցութեան շրջանակին, դրա համար էլ չի կարող որ

և է ժամանակամիջոցով սահմանափակուել, և կապ ունենալ քաղաքական և շխանութեան դործողութեան հետ։ Սակայն յիշեալ համոզանքը քաղաքական և շխանութեան կողմից չպետք է համարուի հարկադրական, չպետք է յամեցնի կրօնափոխութեան խնդիրը կարգադրելու համար սահմանուած ՅՈ-օրեաց միջոցը։

VIII. Պրաւոսութիւնից ուրիշ կրօնի կամ դաւանութեան անցնելու համար յայտարարութիւնը, եթէ տպած ձեռով (բլանկ) էլ լինի, ինքն ըստ ինքեան ապօրինութիւն չի համարւում և չի կարող արդեպ լինել յայտարարութեանը ընթացք տալու այն կարգին, որ ցոյց է տրուած ներքին Գործերի նախարարութեան, 1905 թ. օդոսառուի 18, № 4628 շրջաբերականով։

Քաղաքական վարչութիւնը այդպիսի յայտարարութիւնները մտիկ անելիս, պետք է ի նկատի ունենայ Միապետի գծած ական հոգին, որոնցով պրաւոսութիւններին թոյլ է տրուած հեռանալ իրանց հաւատից։ Այս մաքին համեմատ, որ ոյժ է ստանում զօրութեան մեջ եղող քրեական օրէնքի ըովանդակութեամբ էլ, պրաւոսութիւնից ուրիշ դաւանութեան փոխուելու էական սկայմանն է կրօնափոխ լինել ցանկացողի խղճի ազատ թելադրութիւնը։

Ուստի և քրեական օրէնքում պահուած են պրաւոսութիւններին սադրելու նոյնպէս և պրաւութաւնների մեջ այլակրօն և այլադաւան վարդապետութիւններ քարոզելու համար սպառուհասող միջոցները։

Դրա համար էլ քաղաքական վարչութիւնը սկարտաւոր է քննել թէ տպած յայտարարութիւնների երեսոյթը օրէնքով արդելուած հաւատորոսութեան կամ որ և է մեկի կողմից գիտակցարար դործողութեան հետեանք չէ պրաւոսութիւններին խարէութեամբ աղանդաւորութեան դարձնելու, և եթէ հաստատուի՝ տպած յայտարարութիւններ տարածողների դէմք քրեական դատավարութիւն յարուցանել։

IX. Զօրութեան մեջ եղող օրէնքով (1906 թ. հոկտեմբ. 17-ի քարձրագոյն հօրովարտակ յօդ. 41 և 42 մասն 1. և յօդ. 38, մասն 11.) աղանդաւորների համայնքների համար ծննդեան մատեսները (մետրիքական գրքեր) պատրաստում և ուղարկում են նահանգական վարչութիւնները համայնքների խորհուրդներին, նրանք այդ խնդրած կրլինին թէ ոչ, իսկ տարուայ ընթացքում այդ մատեսների վաւերացրած պատճէնները պետք է ներկայացուեն նոյն նահանգական վարչութիւններին։

X. Հնածէս և աղանդաւոր համայնքները, որպէս մաս-

նաւոր համայնքներ, պետական, այս թւում և պրաւոսլաւ դաւանութիւնների, հաստատութիւնների հետ պաշտօնական յարաբերութեան իրաւունք չունին, յիշեալ համայնքները յիշեալ հաստատութիւններց երանց համար մի անհրաժեշտ տեղեկութիւն ստանալու համար, ընդհանուր կարգերին համեմատ, պարտաւոր են պատշաճ դիմումն անել, որոնց բաւարարելը կը մնայ ոլատշաճ վարչութիւնների և անձերի կամքին:

XI. 1905 թ. ապրիլի 17-ին Բարձրագոյն Հըովարտակի տնօրինութեան համեմատ, հնածէոնների ազօթատների կառուցումն թոյլատրում է ներքին Գործերի Նախարարութիւնը պայմանաւ, որ կառուցանողները դումարը նախադուած շինելի ազօթատան համար և շինարարական օրինադրքի ոլահանջած տեխնիքական հաւասարիացումն պատրաստ ունենան:

XII. Կառավարիչ Սենատը բացատրել է, որ մինչև օրէնսդրական կարգով կը հաստատուեն հնածէոնների ու աղանդառների նուէրներ հանգանակելու կանոնները, յօժարակման էրներ հանգանակելու դիմումները, եղած սովորութեան համեմատ, կը թոյլատրի ներքին Գործերի Նախարարը Եւր իշխանութեամբ:

XIII. Զօրութեան մէջ եղած օրէնքով (հատ. օրին. XI. մասն 1. յօդ. 7. և դրա յաւելուած) հրէաները կարող են 0. Մկրտութիւն ընդունել միայն ներքին Գործերի Նախարարութեան թոյլատութեամբ, պահպանելով այս մասին եղած յատուկ սահմանուած կանոնները. դրա համար էլ աղանդառների համայնքների՝ հրէաներին տուած վկայականները, թէ նրանք այս կամ այն աղանդի կարգով Ա. Մկրտութիւն են ընդունել, կը համարուեն օրինադրանցութիւն:



ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՏՈՍԱՀՄԱՆՈՒՄ

«Российск. № 1679, առնելով Politische Correspondenz լրագրից, դրում է՝ որ Վալախիայի շրջաններում դառն կերպով դանդատում են, որ տիեզերական պատրիարքարանը յամառութեամբ չի կամենում բաւարարել Վալախիայի աղղաքակութեան պահանջները եկեղեցիների և դպրոցների մասին. Ռումինիայի և Յունաստանի յարաբե-

ըութեան բարւոքմամբ կարծւում էր, որ պատրիարքարանի յարաբերութիւնը դէպի թուրքիայի վալախները բարեացակամ կը դառնայ, սակայն յոյները չարդարացան. այժմ էլ վալախները հարկադրուած են մաքառելիրանց ազգային իրաւունքները պաշտպանելու համար, իսկ յոյների կողմից էլ շարունակում է ձգտումն վալախներին, որպէս առանձին ազգութիւն. ոչնչացնել. Առդէն շատ տարիներ առաջ թուրքաց կառավարութիւնը պաշտօնալէս առանձին ազգ է ճանաչել վալախներին, և ամեն բան արել է, որ վարչական շրջանում էլ գործադրուի իւր կարգադրութիւնը. Ստկայն պատրիարքարանը այս մասին չի կամենում որ և է բան լսել, և յամառութեամբ շարունակում է վալախներին յոյն կոչել. ի միջի այլոց պատրիարքը, չնայելով բոլոր թախանձանքներին. Հե թոյլ տալիս նրանց իրանց եկեղեցիներում և դպրոցներում ռումանական լեզուն դործ ածել, և մինչև անգամ եկեղեցուց մերժեց մի քանի քահանաներին, որոնք ռումաներէն էին ժամ տաել. Այս ձև գործելակերպը վալախները համարում են յայտնի անարդարութիւն, մանաւանդ որ պատրիարքարանը թոյլ է տուել Անատոլիայում տեղացիներին թուրքերէն լեզուով պատարագել.

Տ. Ա. Ե.

